մատան խուցը տանել: Մեր դասատունը, թուրքի մեչիդի նման, բոլորովին մերկ էր. նստարան, աթոռ, սեղան կոչուած բաները այնտեղ չկային: Աշակերտները ծալապատիկ նստում էին խոնաւ յատակի վրայ, առանց տախտակամածի, որ միայն պատած էր ճահճային բոյսերից հիւսած հասիրներով: Վարժապետը միայն իր տակին փռած ունէր այծի մորթի, եւ մի քանի հարուստների որդիները նոյնպէս ունէին փոքրիկ օթոցնէր, որ բերել էին իրենց տներից: Միակ առարկաները, որոնք յիշեցնում էին, թէ այն մթին եւ գերեզմանի պէս խոնաւ սենեակը դպրոց էր, — էին՝ ֆալախկան եւ մի խուրձ դալար ճիպոտներ նրա մօտ դրած...

Ա՜խ, քանի՜, քանի՜ անգամ մենք գողացանք, քանի՜ անգամ կոտրեցինք այն անիծուած ֆալախկան, դարձեալ չկարողացանք ազատել նրանից: Նա միշտ կար եւ կար... Նա միշտ անպակաս մնաց մեր դպրոցից... Երբ ես շատ ուշ, վերջին ժամանակներում, կարդացի ինկվիզիցիայի հնարած գործիքների նկարագրութիւնը եւ նրանց տեսակները, զարմացայ, թէ ինչպէ՞ս էր պատահել, որ կաթոլիկ եկեղեցու հանճարը, որ այնքան զօրաւոր էր տանջանքի մեքենաներ ստեղծելու մէջ, բոլորովին ի նկատի չէր առել ֆալախկան — այդ, աշակերտի հոգին մարմինը մաշող գործիքը... Աշակերտի մերկ ոտները դնել այդ պատժական մեքենայի մէջ, պտտեցնելով վեր բարձրացնել, յետոյ դալար ճիպոտներով այնքան հարուածել, մինչեւ ողորմելի զոհը բոլորովին թուլանայ, ուշաթափ լինի, — ահա այդ էր ֆալախկայի նշանակութիւնը: Ամենաանտանելին այն էր, որ պատժող աշակերտին ծեծել էին տալիս նրա բարեկամի կամ ամենասիրելի ընկերի ձեռքով: Եթէ այդ վերջինը հարուածները թուլացնում էր, կամ հրաժարւում էր ծեծելուց, նրան եւս ենթարկում էին միեւնոյն գանահարութեանը:

Վաղ առաւօտեան սկսւում էր դասատուութիւնը: Վարժապետը մի անկիւնում նստած էր լինում, որպէս քուրմը իր խորին սրբազնութեան մէջ: Նրա առջեւ դրած էր փոքրիկ գրակալը, — այդ նրա ամբիոնն էր: Աշակերտները հերթով մօտենում էին, վարժապետի աջը համբուրում էին, չոքում էին նրա առջեւ եւ դասագրքերը դնելով գրակալի վրայ, սկսում էին «համար տալ» (դասը ասել): Սովորաբար ամէն մի սխալի համար իւրաքանչիւրն ընդունում էր «խրատի» մի-մի սաստիկ զարկ իր ափի մէջ: Իսկ եթէ դասը բոլորովին սերտած չէր, նրա համար պատրաստ էր անիծուած ֆալախկան...

Այդ «խրատ» կոչուածը աստծոյ մի առանձին պատիժն էր. նա շինուած էր ամենաամուր փայտից եւ փոքրիկ թիակի ձեւ ունէր: Հին գրքերի մէջ գտնուած բոլոր ասացուածքները որոնք վերաբերում էին ծեծելու, գանահարութեան, փորագրուած էին նրա վրայ: Օրինակ, այսպիսի խօսքեր. «որ ոչ լոիցէ